

**ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-14/5 -ՄՇԱԿՈՒՅԹ-ՊՖ-1**

ք. Աշտարակ

18 հունիս 2014 թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետարանը, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Հ. Գևորգյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և Մեղիսոն Էյբլ ՍՊԸ ---ն, ի դեմս Ընկերության տնօրեն Է. Աբրահամյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Աշնակ համայնքի կենցաղի տան վերանորոգում աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ մինչև 2014թ. նոյեմբերի 18-ը ներառյալ:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքները, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն

վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել ան պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները: Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից ողջ ծավալով աշխատանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում, վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն, Հավելված N 4) ստորագրմամբ:

Աշխատանքի կատարման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում այդ աշխատանքների մասին որ կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

4.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 7օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև պայմանագրի կատարման արդյունքը ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, *իսկ տարածամկետը վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:*

4.6 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

4.7 Պատվիրատուի կողմից աշխատանքները փուլերով ընդունելու դեպքում, եթե Պատվիրատուի կողմից հայտնաբերվում են նախկինում ընդունված աշխատանքների վերաբերյալ անհամապատասխանություններ, ապա Պատվիրատուն իրավունք ունի կատարել անհրաժեշտ փոփոխություններ նախկինում ընդունված աշխատանքները արձանագրած փաստաթղթերում (կատարողական ակտ, հանձնման-ընդունման ակտ և այլն)՝ այդ մասին տեղեկացնելով Կապալառուին:

Այն դեպքում, երբ նման փոփոխությունները հանգեցրել են նախկինում ընդունված աշխատանքների համար վճարված գումարի փոփոխության անհրաժեշտության, ապա Կապալառուի կողմից հերթական հանձնման-ընդունման ակտով ներկայացված աշխատանքների համար Պատվիրատուն վճարում է՝ նվազեցնելով վճարման ենթակա գումարը անհամապատասխանության չափով:

Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի կատարման համար պայմանագրի գինը վճարել է ամբողջությամբ, ապա Կապալառուն պարտավոր է վճարել Պատվիրատուին սահմանված գումարը այդ մասին պահանջը ստանալու պահից յոթ օրվա ընթացքում:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 18 400 000 տասնութ միլիոն չորս հարյուր հազար ՀՀ դրամ, որից 3 066 667 երեք միլիոն վաթսուներեք հազար վեց հարյուր վաթսուներթ ՎՎ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում

(եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014 թ. դեկտեմբերի 25-ը՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կան մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա

կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կապալառուին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կապալառուն պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցու, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքների ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Եթե ենթակապալի միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխություններ իրականացվում է Պատվիրատուի համաձայնությամբ:

2) Կապալառուն է պատասխանատվություն կրում ենթակապալառուի պարտավորությունների համար:

Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում:

պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

8.5 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) պայմանագրով նախատեսված Աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

8.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.8 Սույն պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ : Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.9 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Արագածոտի մարզպետարան
«Արագածոտնի մարզ, ք.Աշտարակի Վ.
Պետրոսյան 4
«Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
h/h 900441041226 ՀՎՀՀ 05004247
Աշխատակազմի ղեկավար



ԿԱՊԱԼԱՌՈՒ

Մեդիսոն Էյբլ ՍՊԸ
«Ք. Երևան, Ա. Ահարոնյան 5 շ. Բն 43
Հայ բիզնես բանկ ՓԲԸ
h/h 1150006841550100
ՀՎՀՀ 01012522
Տնօրեն





Վարահամյան



ՄԱԿԱԼԱԹՎԱԿԱՆԱՇԻՎ

Աշխատանքի կենցաղի տան վերակառուցում ԱՇՄՍԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ


22		Աշխատանքի նկարագիրը	Չ/Մ	Քանակ	Միավորի արժեք	Շուկայական արժեք
1	2	3	4	5	6	7
		Երկրորդ հարկ				
		1. Քանդման աշխատանքներ				
1	10-70 K=0,5	Ջրհորդանի տախտակամածի քանդում	մ ³	1.10	100000	110000
2	46-96	Ջրհորդանի քանդում մետաղական թիթեղից	100 մ ²	0.50	50000	25000
3	10-70 K=0,5	Տանիքի փայտանյութի քանդում	մ ³	1.00	35000	35000
4	46-98	Տանիքի ծածկի քանդում ասբոշիֆերից	100 մ ²	2.40	200000	480000
5	23-227	Շին. աղբի բարձում ինքնաթափին	տն	5.00	50000	250000
6	Գ310-3	Շին. աղբի տեղափոխում 3 կմ	տն	5.00	50000	250000
7	22-4	Ջերմում. Շերտի քանդում խարամից տափաստի տակ	մ ³	0.50	30000	15000
8	11-223	Պատերի գաջի սվաղի քանդում	100 մ ²	0.038	1000000	38000
9	14-320	Պատի մաքրում հին ներկից /ռուդաների և սոսնձաների/	100 մ ²	2.28	500000	1140000
10	13-5	Կերամիկական սալիկների քանդում	մ ²	33.70	50000	1685000
11	11-223	Պատերի ց/ավազային սվաղի քանդում	100 մ ²	0.337	700000	235900
12	23-174	Դռների քանդում	100 մ ²	0.0168	1000000	16800
13	23-160	Խճանկարային հատակների քանդում	մ ³	10.20	120000	1224000
14	23-160	Բետոնե հարթակի քանդում	մ ³	0.52	10000	5200
15	46-87	Պատերի փայտե վահանների քանդում	100 մ ²	0.873	500000	436500
16	23-169	Ց/ավազայի հարթեցուցիչ շերտի քանդում	100 մ ²	2.041	35000	71435
17	23-227	Շին. աղբի հավաքում, տեղափոխում և բարձում ինքնաթափին	տն	33.00	500	16500
18	Գ310-3	Տեղափոխում 3 կմ	տն	33.00	500	16500
		2. Տանիք				
1	10-70	Սպեղնաթղթի տեղադրում /մարթակ, կանգն, մաուերլաստ, թեքան/	մ ³	4.47	5000	22350
2	9-24	Տանիքի պրոֆիլավոր ցինկապատ մետաղաթիթեղ ԿՊ-21-0,5մմ	100 մ ²	2.46	40000	98400
3	Շուկա	Կավարամածի կառուցում 50*60	մ ³	2.38	5000	11900
4	12-278 8-3	Ջրհորդանի կառուցում ցինկապատ թիթեղից	100 մ	0.725	500000	362500
5	Շուկա	Տախտակ ջրհորդանի 50 մմ հաստ	մ ³	3.08	5000	15400
6	Շուկա	Ջրթափի խողովակ 140 մմ	մ	33.00	100	3300
7	8-195	Չագար	հատ	5.00	100000	500000
8	Շուկա	Մոնկեր	հատ	5.00	100000	500000
9	10-71	Չեղևալուսամտի տեղադրում	հատ	1.00	100000	100000
10	12-280	Գագաթնագծի կառուցում ց/թիթեղից 0,5 մմ	100 մ ²	0.15	100000	15000
11	10-201 37-1	Փայտե կարկասի հակահրդեհային լարապատում	մ ³	6.00	100000	600000
12	10-203 37-3	Կավարամածի հակահրդեհային լարապատում	100 մ ³	2.46	100000	246000



13	10-22	Յվիկի երեսպատում տախտակից-25 մմ	մ ²	9.50	1000	9500
14	Շուկա	Տախտակ ցվիկի	մ ³	0.01	100000	1000
15	12-280	Ճակտոնի երեսպատում ցինկապատ թիթեղով-0,55 մմ	100 մ ²	0.007	5000	35
16	12-280	Յվիկի երեսպատում ցինկապատ թիթեղով-0,55 մմ	100 մ ²	0.01	10000	100
17	12-280	Հասանցի կառուցում ցինկապատ թիթեղով-0,55 մմ	100 մ ²	0.066	10000	660
18	6-86	Խարսխի տեղադրում անցքերում А500С	տն	0.0456	1000	45.6
19	23-47	Անցքերի զայլիկոնում 370 մմ խորությամբ	100 անցք	0.76	2000	1520
20	46-71	Անցքերի ցեմենտացում	մ ³	0.006	5000	30
21	8-9	Որմնափայտի և ծաղեղատուքերի ամրակապում տեղադրվող խարսխներից	կգ	14.00	400	5600
22	Շուկա	Ամրան /ճարմանդ/	տն	0.007	450000	3150
3, Բացվածքներ						
1	Շուկա	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում /բացված (օտար. Պրոֆիլ սպիտակ) 60մմհաստ, 4+4 ապակեխալիք	մ ²	0.70	70000	49000
2	Շուկա	Մետաղական խուլ դռան տեղադրում 6 սմ/օտար պրոֆիլ սպիտակ գույն/	մ ²	1.68	50000	84000
3	11-55 11-56	Պատուհանագոգերի տակ ց/ավ. Մվադի իրականացում	100 մ ²	0.064	25000	1600
4	7-51	Մետաղապլաստե պատուհանագոգերի տեղադրում	մ ²	6.40	500	3200
5	Շուկա	Մետաղապլաստե պատուհանագոգերի տեղադրում /40 սմ լայնությամբ/	զմ	16.00	20000	320000
4, Հարդարման աշխատանքեր						
1	11-64վ	Առաստաղի գաջի սվադի նորոգում բարելաված որակի միջև 10 մ բառ.	100 մ ²	0.1357	500000	67850
2	15-277-1	Շեկերի սվադում գաջի շաղախով	100 մ ²	0.08	500000	40000
3	15-246-1	Պատերի սվադում գաջի շաղախով բարելաված որակի/	100 մ ²	1.21	20000	24200
4	11-57վ	Պատի գաջի սվադի նորոգում բարելաված որակի միջև բառ	100 մ ²	0.148	200000	29600
5	15-256	Պատերի սվադում ց/ավազային շաղախով	100 մ ²	0.038	200000	7600
6	15-568	Պատերի և շեկերի յուղաներկում	100 մ ²	0.417	100	41.7
7	15-82	Պատերի երեսպատում կերամիկական սալիկներով 200*300-սսսինձ-4մմ հաստ.	100 մ ²	0.038	50000	1900
8	15-660	Պատերի ներկում լատեքսով լավորակի /կիսափայլուն/	100 մ ²	1.733	500000	866500
9	15-661	Առաստաղի ներկում լատեքսով լավորակի /կիսափայլուն/	100 մ ²	2.041	500000	1020500
10	15-210	Արտաքին պատուհանագոգերի արցունքաթափերի սալ ց/ավ. սվադի իրականացում	100 մ	0.151	1000	151
11	12-280	Արտաքին պատուհանագոգերի արցունքաթափերի երեսպատում ց/թիթեղով	100 մ ²	0.023	1000	23
5, Հատակներ						
1	11-55 11-56	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ.	100 մ ²	2.041	115000	234715
2	11-11	Բետոնե նախաշերտի կառուցում 100 մմ	մ ³	1.000	1	1
3	11-135	Հատակների կառուցում սալիկներից /Պրեգրանիտե սս 600*600 սսսինձ-4 մմ	100 մ ²	2.041	1220000	2490020
4	15-82	Երիշակների կառուցում պրեգրանիտե H=10 սմ	100 մ ²	0.077	1000000	77000
6, Մետաղական բազրիք						
0						
1	9-26վ	Աստիճանահարթակների մետաղական շաղաշարերի ապամոնտաժում	100 մ	0.14	1000000	140000
2	7-736	Բոնաձողով մետաղական բազրիքի տեղադրում	100 մ	0.1455	1000	145.5
3	Շուկա	Մետաղական խողովակ 40*40	մ	18.9	100	1890
4	Շուկա	Մետաղական խողովակ 20*40	մ	85.3	50	4265
5	15-614	Մետաղական բազրիքների յուղաներկում	100 մ ²			146
7, Ե/բետոնե հարթակ						
0						
1	6-173	Ե/բ միաձուլ տեղամասերի կառուցում	մ ³			2600




2	11-221	Հարթակի երեսայտում բազալտ սալերով 3 սմ հաստությամբ	մ ²	12.70	100	1270
Առաջին հարկ						
8, Հարդարման աշխատանքներ						
1	14-320	Պատի մաքրում հին ներկից /յուղաներկ և սոնձաներկ/	100 մ ²	3.342	100	334.2
2	46-87	Պատերի փայտե վահանների քանդում	100 մ ²	0.307	100	30.7
3	11-64Վ	Առաստաղի գաջի սվաղի նորոգում բարելաված որակի մինչև 10 սմ քառ.	100 մ ²	0.2836	100	28.36
4	15-277-1	Շեղերի սվաղում գաջի շաղախով	100 մ ²	0.203	100	20.3
5	15-246-1	Պատերի սվաղում գաջի շաղախով բարելաված որակի/ս	100 մ ²	0.307	100	30.7
6	11-57Վ	Պատի գաջի սվաղի նորոգում բարելաված որակի մինչև 10 սմ քառ.	100 մ ²	0.5518	100	55.18
7	15-568	Պատերի և շեղերի յուղաներկում	100 մ ²	0.203	100	20.3
8	15-660	Պատերի ներկում լատեքսով լավորակի /գիսափայլում/	100 մ ²	3.066	100	306.6
9	15-661	Առաստաղի ներկում լատեքսով լավորակի /գիսափայլում/	100 մ ²	1.418	100	141.8
10	15-210	Արտաքին պատուհանագոգրի արցունքաբափերի տանցում/ սվաղի իրականացում	100 մ	0.124	100	12.4
11	12-280	Արտաքին պատուհանագոգրի արցունքաբա.	100 մ ²	0.02	100	2
9, Բացվածքներ						
1	23-172	Պատուհանների քանդում	100 մ ²	0.186	100	18.6
2	23-174	Դռների քանդում	100 մ ²	0.1603	100	16.03
3	Շուկա	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում /բացված (օտար. Պրոֆիլ, սպիտակ) 60մմհաստ, 4+4 ապակեփաթե.	մ ²	7.29	100	729
4	Շուկա	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում /չբացված (օտար. Պրոֆիլ, սպիտակ) 60մմհաստ, 4+4 ապակեփաթե.	մ ²	11.31	100	1131
5	Շուկա	Ալյումինե դռան տեղադրում (օտարերկրյա Պրոֆիլ, 4+4 սպիտակ, թերմոկամրոցով 60 մմ հաստ,	մ ²	5.635	100	563.5
6	Շուկա	Մետաղապլաստե խուլ դռան տեղադրում 6 սմ /օտար պրոֆիլ, սպիտակ գուն/	մ ²	10.395	100	1039.5
7	11-55 11-56	Պատուհանագոգրի տակ ց/սվ. Սվաղի իրականացում	100 մ ²	0.053	100	5.3
8	7-51	Մետաղապլաստե պատուհանագոգրի տեղադրում	մ ²	5.24	100	524
9	Շուկա	Մետաղապլաստե պատուհանագոգրի տեղադրում /40 լայնությամբ/	զմ	13.10	100	1310
10, Հատակներ						
1	23-163	Տախտակե հատակի քանդում	100 մ ²	1.108	100000	110800
2	11-78	Խճանկարային հատակների եղում գոյություն ունեցող	100 մ ²	0.310	5000	1550
3	11-5	Ավազակազային հիմնաստակ հատակների տակ	մ ³	16.70	20000	334000
4	11-2	Բնահողի տոփանում խճով /15-20 մմ/	100 մ ²	1.108	500	554
5	11-55 11-56	Յ/ավազային հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ.	100 մ ²	1.108	100000	110800
6	11-11	Բետոնե ետիլաշերտի կառուցում 80 մմ	մ ³	8.90	100	890
7	11-135	Հատակների կառուցում ալիկներից /Պրեգրանիտե սև-400*400 սսիկն՝4 մմ	100 մ ²	0.600	500	300
8	15-82	Շրիշակների կառուցում պրեգրանիտե H=10 սմ	100 մ ²	0.090	500	45
11, Սալվածք						
1	23-169	Սալվածքի քանդում	100 մ ²	0.902	100	90.2
2	23-227	Շին. աղբի հավաքում, տեղափոխում և բարձում ինքնաշարժային	տն	13.00	100	1300
3	Գ310-3	Տեղափոխում 3 կմ	տն	13.00	100	1300
4	11-2	Բնահողի տոփանում խճով	100 մ ²	0.902	100	90.2
5	11-11	Բետոնե սալվածք 100 մմ հաստությամբ	մ ³	9.02	1000	9020
6	11-55 11-56	Յ/ավազային հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ.	100 մ ²	0.902	100	90.2
Ներքին էլեկտրական կարարում						
1	8-599-1	Լյումենեցիոնային լուսավորման լուսամուկի կառուցում 1ՊՈ-2*36	հարց		500	22000
2	8-603-1	Առաստաղի լուսավորման տեղանիղում շիկացում և նվազում	հարց		500	17000



3	8-603-1	Պատի լուսատուի տեղադրում շիկացման լամպով 2*60	հատ	2.00	1000	2000
4	8-591-2	Էլեկտրական անջատիչ միաստեղ միաբևեռ	հատ	5.00	500	2500
5	8-591-2	Էլեկտրական անջատիչ երկստեղ միաբևեռ	հատ	7.00	500	3500
6	8-591-7	Երկբևեռ վարդակ ՍԻ-220 վ,ԿԵԴ=6Ա	հատ	21.00	500	10500
7	10-975-8	Տուփ վարդակների և անջատիչների	100 հս	0.34	100	34
8	10-975-8	Տուփ բաժանարար	100 հս	0.25	50	12.5
9	8-417-9	Պլաստմասի սակառների տեղադրում 10*10	100 մ	0.04	500	20
10	8-146-1	Մալուխի անկացում 2*6 մմ ՎՎԳ	100 մ	0.10	1000	100
11	8-402-2	Հաղորդալարի անցկացում ՊՎՔ 2*2,5 մմ2	100 մ	9.20	50	460
12	8-402-2	Հաղորդալարի անցկացում ՊՎՔ 3*2,5 մմ2	100 մ	3.10	50	155
13	8-417-1	Պլաստմասե ճկախողովակ d=16 մմ	100 մ	0.50	1000	500
14	23-117	Անցքերի բացում	100 հս	0.01	5000	50
15	8-402-2	Հաղորդալարի անցկացում /առանց հաղորդալարի այլմ	100 մ	2.00	100	200
16	8-562-1	Խմբային վահան/պլաստմասե արկղ 6տեղ/	հս	1.00	1250	1250
17	8-525-1	Միաբևեռ ավտոմատ անջատիչ 6Ա	հատ	1.00	5000	5000
18	8-525-1	Միաբևեռ ավտոմատ անջատիչ 16Ա	հատ	3.00	5000	15000
19	23-120	Ակունների փորում 20*15	100 մ	3.28	351	1151.28
20	15-247	Ակոսագծերի գաջի սվաղում	100 մ²	0.0984	100	9.84
		ԸՆԴԱՄԵՆԸ				13813813
		ՇԱՂՈՒՑՔ 11 %				1519519
		ԸՆԴԱՄԵՆԸ				15333333
		ԱԱՀ-20 %				3066667
		ԸՆԴԱՄԵՆԸ				18400000

ՊՍԱՎԻԴԱՏՈՒ
 22 Արագածոտի մարզպետարան
 22 Արագածոտի մարզ, ք.Աշտարակի Վ. Պետրոսյան 4
 22 Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
 հ/հ 900441041228 2422 05004247
 Աշխատակազմի ղեկավար

Հ. Գևորգյան
 (ստորագրություն)
 4.9



ԿԱՊԱԱՐՈՒ
 Մեդիսոն Էյլ ՍՊԸ
 22 ք. Երևան, Ա. Սահակյան 5 շ. Բն 43
 Հայ բիզնես ընկ. ՍՊԸ
 հ/հ 12012522



Հավելված թիվ 2

18 հունիս 2014 թ..

կնքված աշխատանքների կատարման
թիվ ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-14/5 -ՄՇԱԿՈՒՅՐ-ՊՖ-1 գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Աշնակ համայնքի կենցաղի տան վերանորոգում ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Ծավալը (ՀՀ դրամ)	Աշխատանքների կատարման ժամկետը	
			Սկիզբը	Ավարտը
1	Աշնակ համայնքի կենցաղի տան վերանորոգում	18 400 000	Պայմանագրի կնքման օրը	18.11.2014թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ


ՀՀ Արագածոտի մարզպետարան
 ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակի Վ.
 Պետրոսյան 4
 ՀՀ Ֆինանսների նախարարության
 գործառնական վարչություն
 h/h 900441041226 ՀՎՀՀ 05004247
 Աշխատակազմի ղեկավար



[Handwritten signature]

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Մեդիսոն Էյբլ ՍՊԸ
 ՀՀ, ք. Երևան, Ա. Սևարոնյան 5 շ. Բն 43
 Հայ թիզնես բանկ ՓԲԸ
 h/h 1150006841550100
 ՀՎՀՀ 01012522



Տնօրեն
 Արթուր Կարամյան

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Հրում»

N	Աշխատանքների անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 20 14 թ.' ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	իւլիս	սեպտ	հոկտ	նոյեմ	դեկտ	դեկտ	դեկտ	դեկտ	Ընդամենը Տարի	
1.	Աշնակ համայնքի կենցաղի տան վերանորոգում	-	-	-	-	-	0	18 400 000	18 400 000	18 400 000	18 400 000	18 400 000	18 400 000	18 400 000

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են ածողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ


«Հ Արագածոտի մարզպետարան
 «Հ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակի Վ.
 Պետրոսյան 4
 «Հ Ֆինանսների նախարարության
 գործառնական վարչություն
 հ/հ 900441041226 ՀՎՀՀ 05004247
 Աշխատակազմի ղեկավար՝



[Handwritten signature]
(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Մեդիսոն Էյթլ ՍՊԸ
 «Հ ք. Երևան , Ա. Ահարոնյան 5 շ. Բն 43
 Հայ բիզնես բանկ ՓԲԸ
 հ/հ 1150006841550100
 ՀՎՀՀ 01012522



Արագածոտնի մարզպետարան

Կնքված աշխատանքների կատարման
թիվ ՀՀԱՄ-ԲԸԱԿ-ԱՇՁԲ-14/5 -ՄՇԱԿՈՒՅԹ-ՊՖ-1 գնման պայմանագրի

Կատարող

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի _____ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ _____ ի _____ դեմս
և Կատարողը՝ _____ ի
դեմս _____, հիմք

ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները,
մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը _____ 20__թ-ից
_____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ
աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

ստորագրություն

Ազգանուն, Անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

ստորագրություն

Ազգանուն, Անուն
Կ.Տ.